

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրուած են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունուած է ամեն լեղուով:

Յայտարարութիւնները համար վճարուած են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դիմարի կիրակի.
Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թուրքաց չայաս-
տանից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լու-
րեր.—ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՎԻԴԱՆԵՐ.—ԲՈՐՍՍԱ.
—ՊԱՏԱՄԱՆԵՐ.—ԹԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արաքսի հովիտը և հայերը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԻՄԻՏՐԻ ԿԻՊԻԱՆԻ

Հեռագիրը բերեց մեզ հետեւեալ տխրա-
լի և սրտաշարժ լուրը. հոկտեմբերի 24-ին
գիշերը, Ստամբուլի քաղաքում, իր բնա-
կարանում, սպանկեցաւ անյայտ չարագործ-
ների ձեռքով՝ Կիպիարի իմանովիչ Կիպիա-
նին՝ իր մարմինը գտնած է կապած ոտ-
ներով և ձեռքերով և ջարդված գլխով:
Փողը և ժամացոյցը կոտորուած են:

Հանգուցեալը մեր երկրի այն հազա-
ւելու մարդկերէնց թւին էր պատկանում,
որոնք միացնում են խորին խելք բարի
սրտի և մինչև ծերութեան հասակը՝ երի-
տասարդական վառ իդէալիզմի հետ:

Կիպիանի ծնվեցաւ 1810 թւին և Թիֆ-
լիսի ազնւական դարձեցում ուսում աւար-
տելուց յետոյ, նշանակվեցաւ նոյն դպրոցի
մէջ ուսուցիչ: Այդ ժամանակ, Նիկոլայ Լ-ի
թագաւորութեան ժամանակ, վրաց երիտա-
սարդութեան մի խումբ, որոնց թւում և
Կիպիանի էր, հաւաքվում էին մոտենալով ի-
րանց լեզուի և գրականութեան վերածնու-
թեան մասին: Կառավարութեանը մասնե-
ցին այդ երիտասարդներին, ցոյց տալով
իր թէ այդ երիտասարդները կամենում
են անկախ վրաստան վերականգնեցնել և
ահա՛ մի քանի մարդիկ այդ խմբից, 1832
թւին, որոնց թւումն էին Կիպիանի և
Գրիգոր Օրբելիանի, արտոնվեցան Ռուսաս-
տանի ներքին գաւառները: Կիպիանի սկսեց
ծառայել քաղաքացիական ծառայութեան
մէջ իր արտոնման տեղում, վճարելով քա-
ղաքում, իսկ 1857 թւին կարողացաւ վե-
րադառնալ Թիֆլիս, որտեղ նշանակվեցաւ

որպէս առանձին յանձնարարութիւնների
պաշտօնեայ այն ժամանակվայ կովկասեան
կառավարչապետի մօտ և մի և նոյն ժա-
մանակ խմբագրում էր «Закавказскій
Вѣстникъ» հրատարակութիւնը:

Փոխարքայութիւնը Անդրկովկասում մըտ-
ցնվելուն պէս, 1845 թւին, Կիպիանի նշա-
նակվեցաւ փոխարքայի գլխավոր կառավա-
րութեան գլխաւոր տնտեսական գործակա-
նի էր միւս ընդհանուր պաշտօն-
ներ էր վարում կովկասեան քաղաքացիա-
կան վարչութեան երարկայի մէջ: Այնու-
հետեւ դառնալով փոխարքայի խորհրդի
անդամ, նա 1864 թւին ընտրվեցաւ Թիֆ-
լիսի նահանգի ազնւականութեան առաջ-
նորդ, իսկ 1875 թւին ընտրվեցաւ Թիֆլի-
սի քաղաքապետ: Նրա ընտրողները մեծ
մասամբ հայեր էին, իսկ քիչ թէ շատ
նշանաւոր վրացիք բոլորն էլ նրա դէմ էին
քուէարկում ընտրութեան ժամանակ: Վեր-
ջապէս 1884 թւին հանգուցեալը ընտրվե-
ցաւ Քուէթայիսի նահանգի ազնւականու-
թեան առաջնորդ:

Բայց անցեալ 1886 թւին մի քանի
հանգամանքների պատճառով ստիպւած
լինելով թողնել Անդրկովկաս, հանգուցեալը
հեռացաւ Ստամբուլ, որտեղ և ապրում
էր մինչև այժմ:

Կիպիանի ունէր մի փոքրիկ կալուածք
Սուրբամի մօտ, որ աննշան եկամուտ էր
տալիս նրան, բայց սրանից ստանում էր
մի աննշան թոշակ, որի մեծ մասը դնում
էր պարտքերի վճարելուն: Նրան հանգու-
ցեալը, կարելի է ասել, ապրում էր աղքատ
կերպով՝ Ստամբուլում Գեռ. Նորիսում,
ինչպէս պատմում է նա, նա միայն էր
գրել իր ընտանիքին, ասելով որ յոյս ունե-
նալով շուտով վերադառնալ Անդրկովկաս,
նա կարողացաւ, իրան գրելով, վերջապէս
կողմ դնել 150 ռուբլի, ճանապարհահաճախ-
ի հընձմար: Եւ իր փառաւոր անցեալից
յետոյ, այդ 150 ռուբլի ու մի հատ ժա-
մացոյց ունեցող ծերունուն աւաղակները
բարբառոս կերպով սպանում են՝ կողոպ-
տելու դիտաւորութեամբ:

Կիպիանի Ստամբուլից էլ շարունակում
էր գրել իր «Յիշողութիւնները», որոնք
շատ հետաքրքրական էին, և ապագրվում

էին «Русская Старина» ամսագրում:
Հանգուցեալը 77 տարեկան հասակում
գեռ պահպանել էր երիտասարդական
մտաւոր թարմութիւն, վառ երեւակա-
յութիւն, իդէալական ձգտում բողոքե-
լու ամեն անարդարութեան դէմ և պաշա-
պանելու ամեն ոտնակոխ արած ճշմարտու-
թիւնը:

Հանգուցեալը թողել է երեք զաւակ՝ մի
աղջիկ, որ պսակւած է Ա. Լօրդիկյանի հետ
և երկու որդի՝ որոնցից մին աղջկա-
տուութիւն է անում Քուէթայիսում, իսկ մի-
ւր դերասան է Թիֆլիսի վրաց դերասանա-
կան խմբի մէջ:

Լուծւում են, որ հանգուցեալը մարմինը
Թիֆլիս կը բերվի, այստեղ թաղված լինե-
լու համար:

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՈՒՆ

Կիրք դուր, 8 հոկտեմբերի

Կեռ. 1870 թւին հիմնվեցաւ մեր գիւղում մի
դպրոց շնորհիւ գիրքերի Պետրոս-բէկ Տէր-Մարկո-
սեանցի աշխատութեան, որը այն ժամանակ
պրկատակ պաշտօն էր վարում մեզանում: Հիմնե-
լով Կիրք և շրջակայ գիւղերի օգնութեամբ
ուսումնարան, նա մտածեց և ուսումնարանի ա-
պագայի համար. նա ապահովեցրեց ուսումնարա-
նի գրութիւնը, ժողովրդի մէջ համաձայնութիւն
կայացնելով մի համախոսականութիւն
կան հոգեւոր 80 դեռնաւոր սեփականացրեց ու-
սումնարանին: Չը նայելով որ այդ հոգեւոր եկա-
մուտը աւելորդութեամբ կարող էր լրացնել ու-
սումնարանի բոլոր ծախսերը, բայց նա մի և
նոյն ժամանակ համոզեց մի քանի հարուստ բա-
ղաւաքակալ գիրքեղաներին վճարել ուսուցչի տարե-
կան վարձը 400 ռ., նպատակ ունենալով հոգեւոր
եկամուտներից մի դրամագլուխ կաղնել, որը մի
քանի տարվայ ընթացքում մի պատկառելի դու-
մար կը կազմէր, և կարելի կը լինէր, ինչպէս և
Տէր-Մարկոսեանցի նպատակն է եղել, յիշեալ
դպրոցը ժամանակով դիւղադառնական ուսում-
նարան դարձնել: Բայց, զբաղաւազաւոր, կարճ
ժամանակից յետոյ պարոնին տեղափոխեցին և
ուսումնարանը երեք տարի դուրսից ունենալուց

յետոյ, շնորհով գիւղացիների երկպառակութեան,
փակվեց, այնպէս որ չինութիւնը վերջին ժամա-
նակներում բոլորովին քայքայվել էր և ծառա-
յում էր անասունների համար ապաստան: Ու-
սումնարանի հոգեւոր գիւղացիք դարձեալ իրանց
մէջ բաժանեցին և այժմ իրանք են վարում:
Բայց ահա լուր է տարածվում, որ իբր թէ բա-
ղաւաքակալ գիրքեղաներից մէկը, Յարութիւն Քար-
հանեանց կամենում է մասամբ իր ծախսով և
մասամբ բաղաւաքակալ հարուստ գիրքեղաների օ-
գնութեամբ վերականգնել ուսումնարանը: Ասում
էին նմանապէս իբրեւ թէ յիշեալ պարոնը արդէն
մի բաւականաչափ դուրս է ժողովել և մինչև
անգամ չինութեան փայտեղէնները ուղարկված
են դուրս: Բայց այժմ բանից յայտնվում է, որ
մենք խաբված ենք եղել, որովհետեւ ուսումնարա-
նի չինութեան համար ոչ փայտեղէն է եկել դիւ-
ղը և ոչ էլ փող է բերել պ. Քարհանեան չինու-
թեան համար: Ուսումնարանը մինչև յոյսի վեր-
ջը մի և նոյն ողորմելի դրութեան մէջն էր, երբ
արդէն օգոստոսի սկզբներում ժողովուրդը ինքն
սկսեց հոգալ ուսումնարանի մասին և փող ժողո-
վեց չինութեան համար: Արդէն վճարել էին, որ
ամբողջ չինութիւնը կապալով տան 800 ռուբլով,
վերանորոգելու համար: Բայց պ. Քարհանեանց,
որ, ինչպէս երևում է, կամենում է եղել ժողովրդի
փողով բարեգործի անունը վայելել, սկսում է
խառնվել ուսումնարանի գործին և ժողովրդի բա-
րեբար իրանց ցոյց տալով, արգելում է գիւղացի-
ների չինութիւնը կապալով տալուն, ասելով որ
թանգ է, և թէ ժողովուրդը ինքն ձեռնարկելու լինի
չինութեանը, աւելի էժան կը նստացնի այդ չինու-
թիւնը: Ինքն էլ հասարակութեան ժողոված փո-
ղիւր, մի քանիսն էր հոտ միանալով, իր ձեռքն է
դրում և սկսում է չինութիւնը: Բայց ինչ էք
կարծում. անցել է արդէն երկու ամիս և չինու-
թիւնը համարեա մի և նոյն ողորմելի դրութեան
մէջն է, իսկ ամբողջ ժողոված դուրսը, 300 ռ.,
ծախսել է և դարձեալ փող է պահանջում հասա-
րակութիւնից: Հասարակութիւնը նոր է հակացել
գործի ելութիւնը և տեսնում է, որ մինչև չինու-
թեան վերջը դեռ մի հազար ռուբլի էլ պիտի
ծախսի իրանից և հէնց այդ պատճառով էլ ժո-
ղովուրդը այլ ևս չէ ուզում խառնվել ուսումնա-
րանի գործին: Նոյն մարդկանց խումբը ընտրելով

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԱՔՍԻ ՀՈՎԻՏԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ *)

(Nouvelle Géographie universelle par Elisée Reclus). (T. VI l'Asie Russe. P. 260—271)

«Արմենիան» կամ լատադոյն հայ, հայք
կամ Հայկեանները, ինչպէս իրանց իրանց ան-
ւանում են, Արաքսի հովիտում բնակվող զլխաւոր
ազգն են: Իրանց թւով ամբողջ կովկասի մէջ
չորրորդ, իսկ աղբեղութեամբ, ուսմանից յետոյ,
առաջին տեղն են բռնում: Արմենիա կոչուած
արամական ծագում ունի և հաւանականաբար
նշանակում է «բարձր երկիր» և շատ անորոշ մի
անուն է, որ տրվում է այն բոլոր սարահարթերի
խմբին, որոնց կենտրոնում տիրապէս բարձրա-
նում է Արաքսի երկնից գագաթը: Բուն Արմե-
նիան կամ Հայաստանը, որ նշանակում է հայերի
բնակութեան երկիր, ենթարկվելով քաղաքակա-
ր զբաղող փոփոխութեանց և դադարեցնելով իր
զարուց դար փոփոխեց նաև իւր սահմանները:
Արդի ժամանակում Հայաստան կարելի է համա-
րել Արաքսի գրեթէ ամբողջ հովիտը, Կուրի աւա-
զանի մի նշանաւոր մասը, դեռի աջ և ձախ ա-

փերով Նիփրատի ամբողջ վերին աւազանը մինչև
նորա երկու ճիւղերի խառնուրդը, վանի լճի ա-
փերը և Ուրմիա լճի աւազանում՝ Պարսկաստանի
մի քանի կողմերը: Հայաստանի ծանրութեան
կենտրոնը հետզհետեւ տեղափոխվել է դէպի հիւ-
սիս, երբեմն այդ կենտրոնը գտնվում էր վանի
լճի մօտերում և վերին Մուրատի կամ Արեւե-
լեան Նիփրատի հովիտում, ուր մինչև այժմ էլ մի
գիւղ կրում է այդ Հայ ազգի անունը: Բայց մու-
սուլման թուրքերին ենթարկված երկրից չէր
կարող Հայերի տուրք երկիր համարվել, ուստի և
աշխարհի ամեն մասերից, ուր ցրված են հայե-
րը, նոյա հայեաքը դառնում է դէպի Արաքս
տարը և Արաքսի դաշտերը, ինչպէս դէպի իրանց
լուսն հայրենիքը: Մեր օրերումն էլ հէնց այդ տե-
ղումն է նոյա ցեղի ժողովրդին կենտրոնաւորելը,
և ոչ մի տեղ այդպէս անկառն օտար ազգերից
և խտրութեամբ չեն ապրում հայերը, ինչպէս այդ
երկրում, ուր և լեզուն, ինչպէս ասում են, ամե-
նապարտ է և եկեղեցում գործածված հայերե-
նի մեթաբոլը: Վերջին 14-դ դարի վերջից ան-
հատեցել է բոլորովին գործածութիւնից:

1828—1830 թուականին, երբոր ուսմանը
տիրեցին երկրին, Պարսկաստանից և Թիւրքիայից
մօտ 130,000 հայ դադարեցին ուսում զօրքի պատ-
պանութեամբ և հատաւորացեան Արաքսի և Կու-
րի հովիտներում, բռնելով քուրդերի և թաւար-
ների տեղը, որոնք հակադարձաբար դադարեցին
մահմեդականների ձեռքում մնալուց դաւանելու:
Վերջին 1877—78 պատերազմի ժամանակ եր-
կուստեք հակադարձ դադարեցին յար և նման երե-
ւոյթը կրկնվեցաւ: Արդանի դաւաճը, Կուրի

վերին հովիտում և Կարսին, Արաքսի աւազանում,
մեծաւ մասամբ գրկվեցան իրանց մահմեդական
բնակիչներից և ի արեւմուտ ստացան բազմաթիւ
հայեր, որոնք զաւրիս էին Նիփրատի վերին աւազա-
նից և ձորոտի ավերից, մահաւանդ այն մասե-
րից, որ Սան—Ստեֆանոյի դաշնագրից տուել էր
Ռուսներին և Բերլինի վեհաժողովը նորից յետ ա-
ռել: Այս ազգերի ելից հանդիպումը չէր ա-
ռանց կոտորածի, սովի և տարափոխիկ հիւան-
դութեանց: Սարաւիլի բաղնիքներում մարդկա-
յին կեանք զոհ դնաց, և այժմ էլ դեռ չը նայե-
լով խաղաղութեան հաստատութեան, ցեղական
և կրօնական տեղեկութիւնը պատճառ է դառնում
արեւմտահայ տեսարանների: Ասու ամենայնիւ,
ընդհանրապէս ասած, ժողովուրդը աւելի լաւ
տեղաւորվեցաւ, համեմատ իր բնական ձգտու-
ման:

Մինչև այժմ չը կայ քիչ թէ շատ ճշտ լիճա-
կապութիւն փոքր-Ասիայում և ընդհանրապէս
մահմեդական հողի վրա ապրող հայերի թուի
վերաբերութեամբ, բայց հաւանական է որ այս
կողմում ապրողները ուսում հողի վրա ապրողնե-
րից տակաւ լինեն. են *):

*) Հայերի հաւանական թիւը.	
Կովկաս և Եւրոպական Ռուսաստան.	840,000
Թուրքական Հայաստան, ըստ Բա- վէնտտայնի.	760,000
Պարսկական	Կիւր-
բիէլ	150,000
Եւրոպական թուրքի	250,000
Ուրիշ երկրներ	60,000
Գումար	2,060,000

*) Այս թարգմանութիւնը ֆրանսերէնից, տը-
պագրված է «Արարատ» ամսագրում, որից և
արտատպում ենք յօդուածը:

Խմբ.

**) Issaverdens, Armenia and the Armenians.

իր միջից, առանց ժողովուրդի զիտութեան, հոգաբարձուներ, ուղարկում է ի հաստատութիւն Կաթողիկոսին, յայտնելով մի և նոյն ժամանակ նրան, որ իբրեւ թէ տուն ու ծառայ արդէն պատրաստ են ուսուցչի համար, ուսումնարանն էլ շուտով պատրաստ կը լինի, ուստի խնդրում են, որ Կաթողիկոսը մի ուսուցչի վարձի 400 բուբլով և ուղարկի: Եպիսկոպոսն էլ հաւատ ընծայելով հոգաբարձուներին խօսքին, ուղարկում է ուսուցչին, որը արդէն երկրորդ ամիսն է զիտութեան է, իսկ հոգաբարձուները ոչ մի հող չեն տանում նրա համար և իրանց պայմանի համեմատ ոչ տուն են տալիս, ոչ էլ ծառայ: Ուսումնարանն էլ ոչ թէ շուտով պատրաստ կը լինի, այլ եթէ գործը այդպէս շարունակվի, հաղիւ թէ այս տարի չիտութիւնը զուրկ գայ, որովհետեւ ժողովուրդը տեսնելով այդ մարդկանց արարքները, որոնց շնորհով ինքն զուր ծախսերի տակ պիտի ընկնի, համարեա թէ բոլորովին ստուել է և մի առանձին անտարբերութեամբ է վերաբերվում դէպի ուսումնարանը: Եւ եթէ գերապատեալ առաջնորդը, որը, ինչպէս գիտենք, շատ է մտածում իր վիճակի ուսումնարաններին առաջադիմութեան մասին, և աշխատում է մեր գիւղում ուսումնարան բացվելուն, շուտով չը հեռացնի այդ մարդկանց ուսումնարանի շինութեան գործից, և նոր հոգաբարձուներ չընտրի, հաղիւ թէ չիտութիւնը երբ և ինչ հասարակութեան ծախսով զուրկ կը գայ: Ի վերջոյ խորհուրդ կը տայինք մեր բազմաթիւ հարուստ համագիւղացիներին աջակցող չանել իրանց գիւղի ուսումնարանը: Մինք հաւատացած ենք, որ եթէ նրանք ցանկանան, կարող են վերանորոգել ոչ թէ այժմեան դժբաղդ շինութիւնը, որ միայն երկու սենեակից է բաղկացած (մէկ դասատուն, իսկ միւսը ուսուցչի բնակարան), այլ աւելի էլ յարմար չէնք կառուցանել: Գուցէ նրանք այս օր Տէր-Մարկոսեանց, որը այժմ Բագու է բնակվում, կաշխատի իրագործել իր նախկին նպատակները, օգնութեան կանչելով իր հարուստ համագիւղացիներին:

Գիրքեցի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՇՈՒՆԱՎԵՐԻՑ մեզ գրում են՝ «Հոկտեմբերի 9-ին մի դժբաղդութիւն պատահեց մեզանում. մի նոր կառուցված մարաք (գարմանանոց) քանդվելով, իր աւերակների տակ թաղեց երկու տղայ-երեխաներին, որոնք խաղում էին դարմանի վրա: Երեխաներին հանցելին արդէն մեռած:»

ՆԵՐՔԻՆ մի առևտրական գործակալատից ստացանք հետևեալ նամակը: «Կարդալով ձեր լր-

մանում ոչ կրօնական տոկոսութեամբ, ոչ խմբական համերաշխ ոգով, ոչ չափադէտ բնադրմամբ և ոչ վաճառական ճարտիպութեամբ. բայց հրեաների չափ բարոյական չին Մինչդեռ աշխարհի ծայրումն էլ կը հանդիպեն միմեանակ շրջային, որ առանց թուլանալու կենքի պատերազմին է մղում, շայն ընդհակառակը գաղթում է խմբովին և ամբողջովն հասարակութեամբ: Բայց յայտնաւորել է չայերի մեծամասնութիւնը մնացել են իրանց ծննդավայրում. և Հրէաների նման չեն զգլում հողագործութիւնից: Անդրկովկասի շատ գաւառներում գիւղացիք ամբողջովին հայեր են: Միւս կողմից, ինչպէս Ղարաբաղի մի քանի գիւղերում, բնակիչները գաղթում են ժամանակաւորապէս միայն, բանելով իբրեւ բարտաշ կամ ատաղձագործ *): Մինչդեռ, աշխարհի և ոչ մի անկիւնում կը դանդաղ հրէայ, որ իր պարտաւոր այս ձևով ճարէ:

Սակայն հաւանական է որ սեմական տարրը մեծ բաժին ունի հայ ժողովրդի կազմակերպութեան մէջ, որովհետեւ հրէական բազմաթիւ գաղթականութիւններ, մինչ իսկ, խմբովին տեղափոխութիւններ կատարվել են Պաղեստինայից դէպի Հայաստան **): Ընդհանրապէս առած «Հայկազ սերունդը» Արիւսեան, շատ մեծաւոր սպարիկներին, բայց յիշմացս չորս հազար տարվա պատերազմ, աշխարհակալութիւն, սքորոք անդադար յեղափոխել և Արիւսեանին խառնել են դրացի ազգերի հետ: Հրէաները, մասնաւորապէս, ստիպվեցան խմբովին տեղափոխվել Հայկական լեռն-

րադրի № 112 մէջ մի լուր Երևանից, որ հաղորդել էր մի գործակալատար, եւ ևս գործակալատար լինելով, շատ ուրախացայ որ պաշտօնակիցները-ցըս մինը բողոքում է այն անարդարութիւնների դէմ, որ անում են աղաները գործակալատարների վերաբերմամբ: Բայց եթէ մեր մասն վաճառականների և գործակալատարների վիճակը անմիջապէս է, մասամբ իրանք են մեղաւոր այդ բանում: Այդ գաւառակարգին պատկանողները հենց որ մի աւելորդ բուբլի ունեն, փոխանակ գործածել այդ փողը՝ դրեր գնելու: Երկրորդ գրովում և նոյն իսկ հանգանակութեամբ ժողոված փողով ընթերցարարն, գրադարան հիմնելու վրա, անմիջապէս գործ են ածում վայրենի քեֆերի վրա այդիներում և ուրիշ տեղերում: Այդ քեֆերում ամեն կիրակի օրերը յիշեալ գործակալատարներն ու մասն վաճառականները ինչ անկարգութիւններ ասես չեն կատարում... Մինչև անգամ կուսելը և դաշոյնով միմեանց վէրքեր հասցնելը: Չենք կարծում, որ աղաները աւելի համակերպ իրանց գործակալատարներին այդ տեսակ ժամանակ անցկացնելուն, քան թէ նրանց ձգտմանը մտաւորապէս զարգացնելու, մի և նոյն ժամանակ համեստ և աշխիւ գործարծութիւնների վաշխելուն:»

ԹԻՖԼԻՍՈՒՄ եղանակը արդէն կատարելապէս աշխատային է դարձել և մի քանի օր շարունակ բուն աշխատային մանր անձրևներ են զալիս մեզանում:

«Биржевые Ведомости» լրագիրը հաւատացնում է, ինչպէս հաղորդում է «Հիւսիսային գործակալութիւնը», որ կալուածական կրեդիտի կենտրոնական բանկի և ֆրանսիական բանկի-ների մէջ բանակցութիւններ են սկսված՝ փոխադրելու բանկի գրաւական թերթերը 3½ պրոցէնտականներին, որոնք երաշխաւորված կը լինեն կաւալարութիւնից և կուսկոնների հարկից աղտուված, և որոնք պիտի տան օրիգինալական պրէմիա, որի չափի սահմանները բանակցութիւնների գիւղաւոր առարկայ է կազմում: Փոխադրութեան գործողութիւնը հաւասար է 32½ միլիոն բուբլի մետաղական 50% գրաւական թերթերին և 7,600,000 բուբլի մետաղական 53½% գրաւական թերթերին:

Անցեալ տարի դեկտեմբեր ամսին, ինչպէս հաղորդում է «Рус. Куп.» լրագիրը, ֆինանսների միջոցառութիւնն մէջ նշանակված էր մի յանձնաժողով, որ պէտք է քննէր մեր նաւթային արդիւնաբերութեան վրա հարկ դնելու հարցը և այն միջոցները թէ ինչ ձևով այդ հարկը պէտք է առնվէր: Այժմ կազմված է նախադիւ ճարկ դը-րը, ինչպէս Ասորի աշխարհակալների զերինքը: Օրինակ Բագրատունի ցեղը, Հայաստանում և Վերադարձում թաղաւորող ամենահամբաււոր հայաւաճառները, իր ծագումն առաջ է բերում հրէաներից և ծննդաբանութիւնը հասցնում է մինչև Գաւիթ—Մարգարէ թաղաւորը: Հայաստանի գաւառական եկամտաւորից յայտնի է նաև Մամիկոնեան ցեղը, իբրեւ ազգի վրա ահաղին աղդեցութիւն ունեցող, որ չենաց, այն է Չինաստանի մի իշխան բերեց Սոմէթի և Հայաստան փրկել թրւակալութեան 3-րորդ դարում յաւանակազրաց պատմութիւնները պարզ կերպով ապացուցանում են որ այս օտարականների մեծագոյն մասը, Նորմանդների և Վալիսիների նման, պատերազմողներ **): Էին և վարձվում էին կուսկոն անխտոր թշնամու կամ բարեկամի համար և նոյնպէս իրանցի (Արիւս) էին և հաւանականաբար պատկանող այն ճիւղին, որից են Օքսոս գետի աւազանի Տաճիկները ***):

Բոլոր քերականները հայոց լեզուն դասում են արիական ընտանիքում: Այդ լեզուի մեծագոյն նմանութիւնը զինդի հետ է, քերականական կաղմութեամբ ամբողջովին իրանական է, իսկ բառերով շատ նման է յոյն և սլաւոն լեզուներին: Թէև շատ կոշտ և բաղաձայններով լեզու, հայ լեզուն բառերի և քերականական ձևերի հարստութեամբ հաւասար է յունականին, օժննալով կաղմութեան նոյն ձևութիւնը և բարդ բառեր ստեղծելու անսահման կարողութիւն: Հիմարտ է թէև, որ նոր հայերէնը, բաժանված է բաղմաթիւ բարբառ-

ներու նաւթային արդիւնաբերութիւնների վրա, այդ պատճառով պետական խորհրդին ներկայացրած է և վերալիշեալ յանձնաժողովի գիւղացումը և նաւթային արդիւնաբերութեան ներկայացուցիչները կարծիքը:

Մայրաքաղաքը լրագիրները հաղորդում են, որ կառավարութիւնը վճել է 3 միլիոն բուբլի օժանդակութիւն տալ Անդրկովկասեան երկաթուղու վարչութեանը:

«Մշակի» անցեալ 120-որդ համարում տպվեցաւ «Հիւսիսային գործակալութիւնից» մեզ հաղորդված Կ. Պոլսից ստացած մի հեռագիր, որ իբր թէ Կ. Պոլսի հայոց պատրիարքը հրաժարական է ստուել իր պաշտօնից, որովհետեւ Բ. Գուսը մինչև այժմ չէ իրագործում Հայաստանի մէջ խոստացված վերանորոգութիւնները: Այդ հեռագրի խմատը մեզ համար դեռ ևս անբացատրելի է մնում: Ինչ է պատահել, որ Գուսը վերանորոգութիւնները չի կատարում սկսում է հողայ հայերին խոստացված բէֆօրմների մասին, և վերջապէս ինչպէս է պատահել որ նա յանկարծ յիշել է այդ վերանորոգութիւնների չը կատարված լինելու մասին ու նրա հրաժարականն էլ յանկարծակի է եղել, առանց որ մեզ, կամ որ և է ուրիշ լրագիրն այդ նշանաւոր դէպքի մասին լուր հաղորդած լինէին Կ. Պոլսի մշտական թղթակիցները: Այդ տեսակ հրաժարականներ յանկարծակի չեն պատահում, այլ նախապէս բանակցութիւններ են լինում վիճակի հարցի մասին, որի հետեանքը կարող է լինել հրաժարականը:

Երկուշաբթի, հոկտեմբերի 26-ին, Թիֆլիսի թատրոնում՝ ներկայացվեցաւ տեղիս երաժշտական ուսումնարանի տեսուչ և օպերայի ղեկիօր Մ. Խաչատուրովի «Հուսի» (Руб) օպերան: Յիշեալ օպերայի բովանդակութիւնը առնված է հին կապականից, ընդհանրապէս լիբրետոն և հետաքրքրել է կազմված Խաչ ինչ վերաբերում է երաժշտութեան, պէտք է ասել որ այստեղ նկատվում են նոր ուսու չիօլայի բոլոր պակասութիւնները և առաւելութիւնները: Շատ տեղ կըրկնում են եղանակները և այդպիսով այդ կրկնութիւնները օպերային տալիս են բաւական միատեսակ և հետևապէս տաղտալի դոյն, տեղ տեղ հեղինակը օգտվել է հրէական եղանակներով, օրինակ առաջին գործողութեան Նօէմիին աղօթքը: Այլ ընկնող համարներից կարելի է համարել մեկերիւրեան, վերոյիշեալ աղօթքը, երրորդ գործողութեան մէջ Ռութիմի երգը, Սեմէի երգը, ժողովրդի Բոսորի փառաբանելը, չորրորդ գործողութեան՝ նախերգանքը (антракція), պարերը և այլն: Ամեն բան արված էր որ օպերան աջողու-

ներին, շատ բաւեր—բացատրութիւններ ասել է թուրք և վրացի լեզուներից, մանաւանդ Արաբի ստորին հովտում, ուր հայերը չըբապատված են թաթարների, խօսում են մի այլանշան զաւաւաւաբար, ուր երբեմն թուրքերէնը աւելի շատ է քան հայերէնը, իսկ Երիւսում, կովկասեան շղթայից հարաւ, շատ հայ գիւղեր մոռացել են հայերէնը: Այս տեսակ փոփոխութիւնները անխտալիք լին ցեղի ցրտածութեան պատճառով: Բաղմաթիւ հայեր շատուց հեռացած լինելով մայր հայրենիքից, ինչպէս Բաղմաթիւ և Տրանսկովկասի հայերը, մոռացել են իրանց նախնեաց լեզուն: Էլիւիսանի նուիրական վանքում, ուր խօսվում է դասական հայերէնի ամենամաքմը՝ բարբառով, հայ լեզուն է մինչև այժմ էլ զուտ իրանական բարբառ, միւս կողմից՝ հայ դրականութիւնը երկու հազար տարուց աւելի է որ օրից օր հարստանում է անընդհատ և ցոյց է տալիս լեզուի պատմութիւնը և նրա ծագումը: Վախի երկրում ժայռերը ծածկված են հայկական արձանագրութեամբ՝ բնութեւն գրեթէ: Հայկական ուրիշ յիշատակարաններ զրկված են յոյն և պարսիկ լեզուների և սկսած փրկչական 4-որդ դարից, որ դրականութեան ամենածաղկեալ միջոցն է, երբ 300 զորաց բացված էր պատանիների համար, հայերէնը սեփական այբուբեն ունեցաւ, որ մինչև օրս էլ գործածվում է մէջ է: 14-որդ դարում լանթնամուրի արաւաւաքը յանկարծակի վերջ դրաւ Հայաստանի դասական դրականութեան: Ներկայումս հայերը, մեծապէս նախանձախոյր իրանց ընտանեաց, ջանք են գործ դնում իրանց օրոյցը ուսման առաւելութիւնները մատակարարելու և չը կայ հասարակութիւն որ

թիւն ունենայ, երաժշտութիւնը կառավարում էր ինքն հեղինակը և բաւական վարպետութեամբ, օրկեստրը և խօրը ներդաշնակ էին: Կերերը բաժանված էին աջող կերպով եթէ չը հաշվել պ. Բուխալեցկուն (Բոսս), որ բոլորովին ընտելացած չէր իր զերին: Առաջին տեղը բռնում էր պ. Մէդ-վեդէլ, որ մանաւանդ շատ գեղեցիկ կերպով երգեց երրորդ գործողութեան երգը, որը հասարակութիւնը ստիպեց կրկնել: Այս անգամ աւելի պակաս կերպով էր նկատելի այս երգչի ընդհանուր պակասութիւնը—չափադանցած չեղտագրութիւնը: Այնուհետեւ օր. Ջիլիգինա (Նօէմի), Բիչուրինա (Հուսի), Դիլերեց (Որիւս) և Պուզան (Սեմէ): Բոլորը իրանց տեղումն էին և աւմնքն էլ երգում էին ողբերգութեամբ: Աւելի պակաս չէր և օպերայի սարք ու կարգը: Շատ գեղեցիկ էր, երրորդ գործողութեան դեկորացիան որ ներկայացնում է Երուսաղէմի հրապարակը և չորրորդ գործողութիւնը, որ ներկայացնում էր Բոսորի այգին, ուր երկույեան կանթեղների լուսաւորութեամբ կատարվում է Բոսորի հարսանիքը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵՎՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԲԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Անդրկական «Daily News» լրագրի հոկտեմբերի 19/7-ի համարում կարդում ենք. «Վերջերս Հայոց ուշադրութիւնը առհասարակ դրւած է Հայաստանի մէջ յայտնի կրօնափոխական շարժումով: Կիրառելիքի բնակիչներից մեծ բազմութիւն հակված է իւրեանց հին դաւանութեանը «մաս լաբա» ասել և դիմել Հռօմէականութեան, ինչպէս կերեւի, կարծելով թէ կենցաղական առաւել պաշտպանութիւն պէտք է վայելն Աւստրիայից, Ֆրանսիայից և խալիպայից քան այլ պետութիւններից: Այս հանգանակները ի նկատի առնելով, զարմանալի չէ թէ Կ. Պոլսոյ Հայերը անձկութեամբ են փափաղում որ յիշման Արքեպիսկոպոսը—որ Բերլինի դաշնագրութեան ժամանակ Անգլիայից այցելեց,—մէկ հովուական այցելութիւն անէ յուզեալ ժողովրդին Սուլթանի արտօնութեամբ հարկաւոր էր, նա էլ իր հաւանութիւնը չը տուց, և Արքեպիսկոպոսը կը պարտաւորվի Բոսֆորի եղեբըում մնալ: Հաւանօրէն Սուլթանը շատ քիչ փոյթ ունէ թէ իր հայ հպատակները ինչ դաւանաբեր քրիստոնէութեան կը պատկանեն, այլ Արքեպիսկոպոսի ժողովրդի վրա ունեցած քաղաքական ազդեցութեանը երկիւղ է կրում: Սակայն այդ պատկանելի եկեղեցականի ազդեցութիւնը չի պակասի, իր չարժանաց վրա դրւած ճնշումներով: Բ. Գուսը՝ երկն անկարող է այս իրողութիւնը ըմբռնել, զարդ չունենայ կամ չը պահէ... Գիտական և գրական շարժումը շատ զօրեղացել է և հայերը, համեմատած իրանց թուին, ամբողջ ուսու կայսերութեան մէջ առաջին ազգն են գլխը տակնուկալ: Առաջ հայ գրականութիւնը բաղկացած էր աստուածաբանական, պատմական, բնագիտական և քերականական գրքերից, իսկ այժմ նա սկսել է ձեռք զարնել բոլոր ճիւղերին և հարստանում է օտար նշանաւոր գրքերի թաղմանութեամբ: Պատմում են ճանապարհորդները որ Անատոլիայի խորքերում անգամ հանդիպում են Ֆրանսալէտ հայերի որ ծանօթ են մեր գրականութեան: 1854 թուին դեռ, Երուսաղէմում և Արիւսում, գոյութիւն ունէր առ նուազ 22 հայ տպարան: Հայ լրագիրներ են հրատարակվում Թիֆլիսում, Կոստանդնուպոլսում և ուրիշ քաղաքներում *), այլ և այլ միաբանութիւններ՝ Մոսկուայում, Վիեննայում, Փարիզում, Վենետիկում զբաղված են հին լեզուի երկերի հրատարակութեամբ: Հայերի օտար երկրներում ունեցած հաստատութիւններից նշանաւորագոյն է Միլիթար, որ է «սփոյթիչ» արեղայի: 1717 Ս. Ղազարի կղզում հիմնադրված Վենետիկի և Լիդոյի միջև գոնդոլների անցած ջրանցքի մօտ: Այս կարմիր կղզիներով չինված և պարտէզներով չըբապատված վանքում հրատարակվում են թանկագին յիշատակարաններ և գտնվում է մի մատնագրաւ արեւելեան հազուադիւր ձեռագիրներ:

(Կը շարունակվի)

*) N. von Seidlitz, Mittheilungen von Peterman. 1880—Notes manuscrites.
)*) Carl Ritter, Asien. vol X.

**) Saint—Martin, Mémoire sur l'Arménie.
)**) Schweiger—Lerchenfeld, Armenien;—Fr. von Hellwald: Central—Asien.

*) Հայ լրագիրներ 1880-ին. Կոստանդ. 9. Թիֆլիս 5. Էջմիածին 1. Մոսկ. 1. Վիեննա, 1.

որովհետև Հայաստանի կառավարչական բարեկարգութեան համար բոլոր առարկայութիւնները մերթելով միայն չէ բաւականանում, այլ և չնչին երեխայական նախաձեռնում է վարվում այն ամենայն հայի հետ որ խօսելու իրաւունք ունի որպէս բերան իւր հայրենակցաց:

Արտասահմանի հայոց լրագրիւններին գրում են որ այս տարի հունիսը առատ չէին, և հիմա դրութիւն կայ որ ցորենը, որի չափը այժմ 48—54-ով կը ծախվի, պէտք է աւելի թանկանայ: Հայազէտ Յոյն ուսուցիչ պ. Տիմիթրիու Չօլազեան յունարէնի թարգմանած լինելով Հայաստանեայց եկեղեցու պատարադի խորհուրդը, առաջարկել է նրան մեր կրօնական ժողովին, որ իւր գործունակութիւնը յայտնելով քաջալերել է պ. Տ. Չօլազեանին: Մի և նոյն ժամանակ ժողովը այդ թարգմանութիւնը յանձնել է Արթ. Տ. Յովհաննէս Աւար քահանայ Հիւնքեարկէյնտեանի, բաղադատելու համար հայերէն բնագրի հետ:

«Արեւել» լրագրին էր գրում իր արձագանքը այսօր իրականութիւն կը գտնէ այն տխուր դոյժը, որ քանի որ է հետ է կը պարտէր այստ թէ բասենոյ Տօտի գիւղի բնակիչներէն Պոյաճեան Ստեփան և Էլպէզ անուն աղգայինք սպանուած են գիւղին մէջ, գնդակահար լինելով ուրիշ «Թէքէթէմէ» աւազակներէ, որք կ'ըստի թէ զորեալ են եղեր գիւղին քաղաք գաղթականներէն, զի ասոնք արդէն ռիսիւմ թշնամի դարձած էին Հայոց դէմ այն բողոքանաց համար, որոք Հայք երկար ժամանակ մատուցին տեղական կառավարութեան անոնց բռնութիւնաց դէմ: Սպանութիւնը տեղի կ'ունենայ «Կաչկերաց»-ի կիրակի օրը առաւօտեան ժամը 3-ին: Սպանել եղբարք կը վերաբերէին այնպիսի մի գերբաստանի, որ իւր բաւականաչափ հարստութեամբ և 50-է աւելի բաղամաճիկ ընտանեաց բաւանոյ մէջ առաջին տեղը կը բռնէ, և դժբաղդաւոր անոնց մահաւամբ այդ նահապետական միակ տունն ալ պիտի դատարարուի ցան և ցիւր բաժանման և աւերման»:

Երջկայաց գրում են «Արեւել» լրագրին: «Ամսոյ 21-ի կիրակի գիշերը քանի չափ աւաղակը Մեծն ս. Ներսէս Հայրապետի վանուց պարտիւն մի մաշած կողմը քանդելով ներս կը մտնեն և վանուց բոլոր դուրստար ինչքերն ի դատ նաև կը տանին սրբազան անթիւնը, մատուցները, հին մատենաները և այլն, ասոնց մէջ նշանաւոր և նուիրական հուշիւններ ալ ունէին: ս. Սիւրճեան 1168 թուական կը կրէր, այսինքն 720 տարի առաջ յինուած էր և մեծագին էր»:

Նոյն լրագրի մէջ կարդում ենք. «Բաղէշէն հետդնտէ առնուած լուրեր շատ գէշ գոյնբով կը նկարեն տեղւոյն աղգային գործոց վիճակն: Աղգ. ժողովներն անուամբ միայն զոյգութիւն ունենալ վարժարանք անկերպարան վիճակի մը մէջ կը գտնուին. կարծրակայ աղգ. վարժարանը միայն փոքր ինչ իւր դիւրը կը պահէ, այն ալ չէ նորհիւ մէկ երկու ազնուամիտ անձանց մասնաւոր հոգատարութեամբ Հոօմէականութիւնն որ անկից մէկ երկու տարի առաջ կ'ըլլա անաւական տուն ժողովուրդը ունէր, այսօր, շուրհիւ և Ստեփանէ ճուղիներին հնարքներուն, քըստ ան է աւելի տուն ունի»:

«Ամսոյայն Աղգ. Պատրիարքարան հասած տեղեկութիւնը կը ծանուցանեն թէ Մոնղոլները անուն Ամերիկացի միլիոնար մը մարդորսական նպատակի կը ծառայեցնէ Ալաշկալէն և Ամերիկայէն մարդասիրաբար սովորող նուիրեալ զրամներն և թէ նպատակ հետ քարոզիչներ գրկելով չըջակակայ հայաբնակ գիւղերն, և կրօնախօսութիւն կը հրաւիրէ կարօտեալ ժողովուրդն»:

«Արեւել» լրագրում կարդում ենք. «Ամեն. Ս. Պատրիարք Հայրն մէկ քանի տարի առաջ իւր անձնական քսակէն քանի մը շէնքեր շինել տալով ի Նաֆա, Երուսաղէմի վանուց նուիրած էր զայն: Ն. Ամենապատուութիւն այս անգամ ևս Ս. Յակոբայ ծանօթ դեանոյն վրա յերուսաղէմ, իւր անձնական քսակէն սկսած է կառուցանել տալ շէնքեր, որոց յինութեան համար կանխաւ տալ է կայս. Կրտսէ մը: Այդ շէնքեր, որոց շինութիւնը բաւական յաջողութեամբ առաջ տարուած են, դարձեալ Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հօր կողմէ նուիրուած են Ս. Յակոբայ վանուց»:

ՆԱՄՍԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Դարձե՛ք, 17 հոկտեմբերի

Դարձե՛ք ինչ վերստ հեռավորութեան վրա գտնուում է Մոսկովայի կողմից 100 անոց բաղկացած հայաբնակ գիւղը: Մոսկովայի ընկած է ձորի երկարութեամբ, որի առաջից վաղու է դեռ: Մի ժամանակ Մոսկովայի կար մօտաւորապէս 150 տուն զուտ հայ ընտանիքներ, բայց այժմ փոքր առ փոքր զրանց թիւը պակասում է. նոր-նոր թուրք ընտանիքներ են բռնում նրանց տեղը, իսկ հայ գիւղացիների հարուստ մասը տեղափոխուում են քաղաք—Դարձե՛ք: Մոսկովայի ընկած է քաղաքի քահանայներ: Գիւղացիների մեծամասնութիւնը պարսպում է երկրադոքութեամբ, իսկ մի մասը ձիապահութեամբ. սրանք երբեմն Գարադաղի անտառներից անտիւս են բերում Դարձե՛ք և ծախում, կամ այս ու այն ձևապարհօրէն տանում հասցնում են տեղ: Իսկ աղգայնականութեան մի մասն էլ պանդխտութեան մէջն է անցկացնում իր կեանքը: Վերջինս աւելի նպատում է չքաղաքային: Գիւղացի երիտասարդը, իր պատանեկան հասակում, դեռ կեանքի մէջ չէ մտած, առնում է իր ձեռք պանդխտութեան դաւադար և գնում է: Եւ ահա անցնում են տարիներ. վերջապէս եկաւ նա՝ դատարկ գրպանով և թուլացած մարմնով: Ով գէթ մի անգամ մտած է պանդխտութեան մէջ ապրող մշակների բնական տեղին, ով մի քննողական աչքով դիտած է նրանց ապրելու. եղանակները, նա մեզ հետ կը համոզվի թէ որ աստիճանի անսանձկան կեանք է վարում պանդխտ մշակը: Մոսկով սենակաների (եթէ կարելի է սենեակ կոչել) խոնավութիւնը թուլացնում է նրա ջղերը, ֆիզիկական կերպով մոռում և կմախք է դարձնում նրա մարմինը: Եւ այդ բոլոր ինչի համար,—միայն փող աշխատելու համար, բայց արդեօք այդ չարհարանքները կ'ըլլուց յետոյ, պանդխտ մշակը ճշմարիտ աշխատում է փողը... Ոչ, շատ քչերն է հանդիպում բաղդը, իսկ մեծամասնութեան հետ պատահում է մեր վեր նկարագրածը, կամ դրանից աւելի վատը:—Դա՛ զոհմուտութիւն է: Պանդխտ մշակին իր ընտանիքի կարօտը, նրա չքաւորութիւնը, իր սեփական դրութիւնը, իր գրպանի դատարկ ինքը,—մտածմունքի մէջ են ձգուած... Մտածում է նա՝ ինչո՞վ վերջացնել իր անկեանքի դրութիւնը, ինչո՞վ բարեօք իր անհայտանքի միջով: Այդ բոլոր մտածմունքները թիթեկացնելու համար նա անկամայ ենթարկւում է հարեցողութեան և սրանից յետոյ նա մոռանում էր հայրենական օջախը՝ իր ընտանիքը, և թափառում էր չըմոլիկի պէս փողոցներում: Ճշմարիտ դա մի մարմնաւորած ավտ է գիւղացիների համար, որոնք թողնում են երկրագործութիւնը, և դիմում պանդխտութեան:

Մոսկովայի դիւրը ունէր մի դպրոց, բայց այժմ դանաղան արգելքների պատճառով փակ է նա: Գիւղացոց ընդուն, արտասանութիւնը և բառերը կոպիտ են, և աղաւաղած, դուցէ օտարերկրեայ ճանապարհորդները չը հասկանան նրանց խօսակցութիւնը: Մոսկովայից իրանց տանողներին կոչում են մալիկ կամ մէլի: Այս մեղքը չունի այն գործութիւնը և այն իշխանութիւնը, ինչ որ ունէին հին ժամանակ հայոց մեղքները, որոնք տէր էին ամբողջ դաւաճների և ունէին միջին անգամ անկախ իշխանութիւններ ու սեփական զօրք: Դրանք հասարակ տանտեղիներ են: Մեղքը այստեղ շատ անգամ հաւաքում է աղայի հարկը, և յանձնում իրան, սա է շատ անգամ վճարում դիւղի մէջ պատահած կռիւները, և ունի իր օգնականը, գլխից Գիւղում բոլորն էլ վախում են նրանից, մի և նոյն ժամանակ և յարգում: Մեղքերիւնը ընդունելու համար գիւղացիները շատ անգամ բաժանվում են կուսակցութիւնների և այս դէպքում օգտուում է աղան, որովհետև այն կուսակցութիւնը որ աւելի կաշառք կը տայ, նրա միջոցն են ընտրում մեղքից: Մոսկովայից իրանց զարկի համար ամբար ածարար մարմինը է, որտեղ նրանք զուլիս են ամառայն չոք և զանախներին՝ վայելիլու և ծծելու թարմ օդը: Ինչո՞վ է օգնում դարձե՛քից հայը նրա անհայտանքին:—Ոչինչ: Նա գալիս է գիւղը, անցնում իր ուրախ օրերը մոսկովայից և անուն, և մոսկովայից նրա բոլոր հրաշխիւները պատրաստ է կատարել, իսկ նրա մի փոքր անտեղի վարմունքը կամ անգողը խօսքը, տեղի է տալիս դարձե՛քից հային բաց անկու իր

հայտնաբերելի պարկը, որը «մախուս» Մոսկովայի է բերած թափելու մոսկովայից զուլիս: Այս բոլորն մոսկովայից համբերում է, որպէս զի դարձե՛քից հայի օգնութեամբ նա իր պարէնը կարողանայ հայթայթել: Բայց դժբաղդապէս դա էլ քչերն է վիճակւած: Այդ հայտնաբերում չէ բաւականանում դարձե՛քից հայը. նա վերադառնալով Դարձե՛ք, եթէ ցանկանում է մէկին հայհոյել՝ անդադար իր հայհոյանքի մէջ գցում է «մոսկովայից» բառը, կարծես մոսկովայից լինելը մեղք է: Ինչո՞ւ համար դարձե՛քից հայը այդպէս կոպիտ կերպով է վերաբերվում դէպի երկրագործ—մոսկովայից: Գայտնի է որ մոսկովայից իր բոլոր հայրենիքում դարձե՛քից հայի հետ զգաստ է, նա չի թողնի որ դարձե՛քից հայը իրան կողոպտի, և փոքր ինչ ինչայոյ է: Սրա համար ոտանաւոր կայ չինած, որ շատ ընդհանրացած է: Երբ դուք դարձե՛քից հայի հետ կը խօսէք մոսկովայիցների վերաբերմամբ, նա կը պատասխանէ ձեռք:

«Գնացի տեսայ մոսկովայիցի,
«Նոյնեակ քալում հետի կացի,
«Նոյ տուի, նրա տեղը շուր ստացայ...
«Որում չը կար... ես հեռացայ»
Նոյ տուի, և նրա փոխարէն շուր ստացայ...:

մոսկովայից օչինչ օգուտ չը կայ,—այդ բոլոր խօսքերը ցոյց են տալիս որ մոսկովայից իր փոքր ինչ ինչայոյ է: Թող ընթերցողը դադարի կազմէ դարձե՛քից հայի վերաբերմամբ թէ՛ նա ինչ աչքով է նայում մոսկովայիցի վրա...:

Գուցէ մի այլ անգամ կը խօսենք Մոսկովայի տեղաբնակ միջակի, մոսկովայիցների սովորութիւնների վրա, և այլն:

Մեկը

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդոնից հեռագրում են, որ «Fortnightly Review» ամսագրի նոյեմբերի տետրակում կը տպվի Չարլզ Դիկին մի յօդուածը անգլիական դրքի մասին: Դիկին կարծիքով անգլիական դրքը խաղաղութեան ժամանակ բողոքով պատրաստ չէ, և պատերազմի ժամանակ բաւական չէ պետութեան ապահովութեան համար, իսկ ինչ վերաբերում է նաւատորմին, նա շատ թիւղ է Մեծ-Բրիտանիան պահպանելու թշնամու յարձակումից: Դաշտային արտիլերիան չունի բաւական թիւով ձիաներ, պահեստ գրեթէ չը կայ: Մի և նոյն դրութեան մէջն է գտնուում Հնդկաստանի և Երիտասկան միւս գաղթականութիւնների պետական ապահովութեան հարցը:

—«Nord» լրագրում հաստատելով, որ համաձայնութեան կայ Ռուսաստանի և Ֆրանսիայի մէջ, յայտնում է որ դաշնակցութիւն կապելը այդ երկու պետութիւնների մէջ, կը լինէր միայն մի աւելորդ ձեւականութիւն:

—Փարիզից գրում են, որ այնտեղ պարլամենտի բացելու օրը սպասվում էին անկարգութիւններ: «Intransigent» լրագրում մի օր առաջ տպված յօդուածը, որով առաջարկում էր ցոյցեր անել, անհանդուարացրեք միմիկութեան և նա մեծ պատրաստութիւններ էր տեսել անկարգութիւնների առաջն առնելու, միայն ոչինչ չը պատահեցաւ, բացի այն որ 400—600 մարդոց բաղկացած ամբողջ պարլամենտի առջև մի փոքր աղաղակելուց յետոյ ցրվեց:

—«Berl. Tagbl.» լրագրում հաստատում է, որ ռուսաց և գերմանացոց կայսրների տեսակցութիւնը կը կայանայ Բրլինում, միայն այդ տեսակցութիւնը կունենայ միանգամայն մասնաւոր ընտանքութիւն:

—Վիեննայից հեռագրում են, որ կայսերական պալատում ժողովել էր միմարական խորհուրդը, որը քննում էր Աւստրո-Ունգարիայի պետութիւնը զօրացնելու հարցը:

—Վիեննայից հեռագրում են «Hob. Br.» լրագրին, որ պրինց Ֆերդինանդի բոլոր ջանքերը տեսակցութիւն ունենալու թիւրքաց Սուլթանի և Սերբիայի ու Ռումինիայի թագաւորների հետ,—իւրօր անցան:

—Քաղաքական չըջաններում խօսում են, որ Կրիստի առաջարկեց իշխան Բիւմարկին լինել նրա համար միջնորդ Ֆրանսիայի և Գերմանիայի յարաբերութիւնները աւելի բարեկամացնելու համար. ռուրի ներդրումներն ինչպիսիք էր ինչ պալատի մասին լինողը և ինչ իշխան Բիւմարկի: Այսպէս թէ անպէս Կրիստի իր վրա է աւել միջնորդի դերը:

—Պէշտից հեռագրում են թէ «Egyetertes» լրագրում հաւատացնում է, որ պապական նուիրակ կարգինալ Գալիմբերտի ասում է, որ Կրիստի իր ձառերի մէջ ճշմարտութիւն չէ յայտնում, թէ ինչ է եղել նրա նպատակը Ֆրիդրիխս-բուլում իշխան Բիւմարկի հետ տեսնելու ժամանակ: Իսկ այն է, որ իշխան Բիւմարկի յանձն առաւ միջնորդ լինել իտալական այժմեան կառավարութեան և Վատիկանի մէջ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մարդերուրում մի ոմն Շեֆֆել, ստացաւ փոստով իր բարեկամների մէկից մի նամակ, որի վրա մարկա չը կար և Շեֆֆել ստիպված էր, ինչպէս փոստային օրէնքները պահանջում են, կրկնապատիկ վճարելով ստանալ այդ նամակը. նամակի ըովանդակութիւնը հետեւեալն էր: «Ես լաւ եմ, ցտեսութիւն»: Շեֆֆել կամեալով վրէժ հանել, առնում է մի մեծ քար, դնում է արկի մէջ և ուղարկում է իր բարեկամին նոյնպէս չը վճարելով: Բարեկամը ուրախութեամբ վճարեց բաւական մեծ տուգանք, և շուտով բաց արաւ արկը, որի մէջ նա դտաւ միայն քարը մի տոմսակի հետ, որի վրա գրված էր: «Նրա ստացայ տեղեկութիւն թո առողջութեանդ մասին, այս քարը ընկաւ իմ սրտիս վրայից»:

Մի ամերիկացի օրիորդ Էլիզա Ֆարնհամի կարծիքով մարդկութեան երկու սեռերից ամենակատարեալներն է կանանց սեռը: Չանազանութիւնը երկու սեռերի մէջ շատ մեծ է, նրանցից մէկը յիշել է տալիս սերովրէներին և քերովրէներին, իսկ միւսը—մատակներին (?): Կինը նոյնպէս է վերաբերվում տղամարդկանց, ինչպէս տղամարդիկ զօրիւններին (կապիկների մի տեսակը): Կանանց առաւելութիւնը տղամարդկանցից օրգանական է և արմատական և կայանում է նրա ուղեղի գերազանցութեան մէջ և նրա բոլոր հիւսուածքները աւելի քնքայ են, և այդ գերազանցութիւնը ոչ թէ մասնաւոր է, այլ վերաբերում է մարդու ամբողջ գոյութեան: Եթէ ճշմարիտ է որ ընտելեան բոլոր էակները հետեւում են աստիճանաբար մէկը միւսին, այն ժամանակ կարելի է ասել որ կինը կարող է այս սանդղակի ամենաբարձր աստիճանը բռնել: Տղամարդը երկրաբանի տէր է, իսկ կինը երկրի առաքեալն է: Տղամարդը կոչւում է կոպիտ է ստեղծված՝ արտաքին աշխարհի հետ կուսելու համար, իսկ կինը քնքայ է գգայուն է ծնված երկնային չըջանների հետ յարաբերութիւն ունենալու համար: Տղամարդը պէտք է աշխատի, իսկ կինը սիրի: Տղամարդը աշխատում է մարմնով, իսկ կինը հոգով (?): Ամուսինը պէտք է բանի և արտադրի, իսկ կինը վարեն: Իրա Ֆարնհամ կարծում է որ տղամարդը բանականութիւն էլ չունի, և յարգելի օրիորդը հաւատացած է որ կը հասնի այն օրը, երբ տղամարդու այսպէս ասկած բանականութիւնը տեղ կը տայ կանանց ողորկութեան:

—Գիտէք, պարոն, ես իմ աղջկան 10.000 մարկից աւելի օժիտ չեմ կարող տալ, առում է հայրը մի երիտասարդի:

—Ափսոս, շատ ավտոս, ես նրան այնպէս էի սիրում, իբրեւ թէ նա ունենար 20.000 մարկ, պատասխանում է վշտացած երիտասարդը:

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Բեռլին, 26 հոկտեմբերի: «Reichs-Anzeiger» պաշտօնական լրագրում տպված է. Այստեղ ստացված տեղեկութիւններին համաձայն Սան-Ռեմոյ մէջ այս օրերս մի քանի բժշկների կոնսիլիում (խորհուրդ) կայացաւ, թէ ինչ ուղղութեամբ պէտք է շարունակել այսուհետ գերմանական թագաւորական հիւանդութեան բժշկութիւնը կայսրը յանձնարարեց Վիլհելմ պրինցին մի քանի օրով զնալ Սան-Ռեմո, որպէս զի ունենայ ոչ թէ միայն զբաւոր, բայց և մանրամասն բանաւոր գեղութեան բժշկների համախորհրդի հետեւնքների մասին:

Բեռլին, 26 հոկտեմբերի: Այստեղի բօրայում տարածված լուրը իշխան Բիւմարկի հիւանդութեան մասին, ճիշդ չէ:

ԼՕՆԻՆՈՒ, 26 հոկտեմբերի: Գօկտօր Մակենդի կանչված է Սան-Ռեմո, գերմանական թագաւորական խնամուք, քանի որ հիւանդի մօտ վերանորոգվեցան կողորդի ցաւի երկիւղալի նշանները:

ՍՕՏԻՍ, 26 հոկտեմբերի: Ֆիլիպպօպօլի և Սօֆիայի մէջ բացված է երկաթուղային հաղորդակցութիւնը: Իսկ Սօֆիան Պիտաի հետ միացնող գիծը մարտ ամսին կը բացվի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 հոկտեմբերի: Լրագրիները հաղորդում են, թէ մարապին վերահսկողութեանը

